



ՄԵՆԿ

Յարեկան գինը 10 րուբլի, կէս տարվանը 6 րուբլի:
Առանձին համարները 7 կոպեկով:

Քիֆիլուսով գրվում են միմյանից խմբագրատան մէջ:

Մեր հասցեն. Тифлисъ, Редакция «Мшакъ»,
կամ Tiflis, Rédaction «Mschak».

Տ է Լ Ե Փ Օ Ն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից):

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լիզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպեկ:

Տ է Լ Ե Փ Օ Ն № 253.

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Լաւանկար Գրիգոր Տէր-Ղևնդեան և իր ամուսինը՝ Թագուհին, որոնց հետ
միասին, սրտի ցաւով յայտնելով՝ առաջինները իրանց անդրանիկ թանկագին որդու, միւս-
ները՝ իրանց եղբոր:

Վ Ա Հ Ա Ն Տ Է Ր Ղ Ե Ի Ո Ն Գ Ե Ա Ն Ի

մահը, խնդրում են ազգականներին և ծանոթներին՝ հարձ բերել յուզարկաւորութեանը, շա-
բաթ, ամսիս 17-ին, առաւօտեան ժամին 10-ին, իր սեփական տանից, Աւետեան փողոց, № 36,
դէպի վանքի մայր-եկեղեցին: Ամբիքը կը կատարվի ամեն օր, երեկոյան 7 ժամին: 1—2

Յովհաննէս և Բագրատ Շահազեան երբ խորին ցաւով յայտնելով ազ-
գականներին և բարեկամներին իրանց մօր

Ե Վ Ա Տ Ե Ր Ի Ն Է Շ Ա Հ Բ Ա Ջ Ե Ա Ն Յ Ի

մահը, խնդրում են հարձ բերել յուզարկաւորութեան, որ տեղի կունենայ հինգշաբթի օր,
մայիսի 15-ին, առաւօտեան ժամին 10-ին, իր սեփական տանից, Կոզլիա, Ելիսավետինսկա-
յա փողոց, № 61, դէպի վանքի մայր-եկեղեցին և այնտեղից զերեզմանա-
տունը: 1—8

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ո՞վ է թեկնածուն. — ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ
Գիւղատնտեսական գրոյցներ. Արկին հայ գաղ-
թականների մասին. Նամակ Էջմիածնից. Նա-
մակ Կարսից. Նամակ Մոսկուայից. Նամակ խոր-
հանքից. Նամակ խմբագրութեան. Երբեք
լուրեր. — ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Վերջին տեղե-
կութիւններ. Պատերազմի դաշտից. Նամակ
Պարսկաստանից. — ԽԱՌՆ. ԼՈՒՐԵՐ. — ՀՆԱԳԻՐ-
ՆԵՐ. — ԲՈՐՍԱ. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. — ԲԱՆԱ-
ՍԻՐԱԿԱՆ. Նամակ Բուլղարիայից:

ՈՎ Է ԹԵԿՆԱԾՈՒՆ

Չորս օրից յետոյ, մայիսի 18-ին, ձայնա-
ւորների ընտրութիւնն է. քուէարկվել
ցանկացողները արդէն մեծ մասամբ յայտ-
նի են այն ցուցակից, որ կայ քաղաքային
ուպրավայի մէջ, — բայց մինչև այսօր էլ
ապագայ ձայնաւորների շրջանում որոշ
կերպով, բացարձակ ոչինչ չէ խօսվում ա-
պագայ քաղաքացիների մասին ՈՎ պէտք
է լինի քաղաքացիութիւն. — դա անհշտն հարց
չէ: Քաղաքացիութիւնը իբր գործարարող իշ-
խանութիւն, և մասամբ էլ իբր զեկալա-
րող ոյժ առաջին և մի և նոյն ժամանակ
ահագին դեր պէտք կատարէ առաջիկայ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՆԱՍԱԿ ԲՕԼԳԱՐԻԱՅԻՅ

ՍԻՆԻՍԱՐԷ, ապրիլի 20-ին

Նախորդ մի նամակով արդէն ձեզ գրած եմ
պուրկարո-սերպ զաչակցութեան մասին՝ որին
կը քայ կապուի և Չեռնակօրան՝ կազմելու հա-
մար յարմար երրորդութիւն մի Գաչնապիւրը
պէտք է պատրաստուած լինի. մի քանի պաշ-
տօնական ձեռնարկութիւններ և ահա ի գոր-
ծադրութեան պիտի լինի այն Ռուսաստան պ.
Չանքոֆի բերան «Չիլիլինա» լրագիրը՝ կը փո-
թայ հրատարակել իր մարտի թիւերին միոյն
մէջ նորա սեպտեմբ, որ հետեւան է:

1) Գաչնակից երեք կառավարութիւններ կը
միանան, ի պաշտպանութիւն և ի պահպանու-
թիւն իրենց հողերի անձեռնմխելիութեան և
անկասկածեան:

2) Սերպիսի և Պուրկարիսի առեւտրական և
մաքսային պայմանաւոր լրանալէն ետ, այս
երկու երկիրներին սահմանադրութիւն վրա առնը-
ւած մաքսերը երկուստեք պիտի նուազին:

3) Գաչնակից երկիրներէ միոյն մէջ ներքին
խառնութիւն պայթած ատեն՝ միւս երկուսն ի-
րաւունք պիտի ունենան միջամտելու:

4) Նկատելով որ երեք զաչակից կառավա-

չորսամեակի մէջ, հետեւեալ նրա թեկ-
նածութեան խնդրը ներկայումս առաջին
խնդիրը պէտք է լինի այն անձանց հա-
մար, որոնք ցանկութիւն են յայտնել
քուէարկվել, և ուրեմն ուզում են նուիրվել
քաղաքային — ինքնավարական գործունէու-
թեան:

Մինչև այժմ՝ տպագրված և մասնաւոր
կերպով կազմած ցուցակների հեղինակնե-
րը ոչինչ չը յայտնեցին իրանց պրօգրա-
մի մասին, և այդ շատ բնական է, որով-
հետև ինչպէս պարզ երևում է, գրանցի-
ն ու պրօգրամը պիտի ընտրուի իր
ուրիշ պրօգրամը և Երազմէր շա-
պի միակ զեկալարող տեսակէտը եղել է
այս և այն անձին ընտրելու կամ չընտրե-
լու տեսակէտը: Երեւի այդ խմբերը արդէն
ունեն և իրանց կանգնեալ քաղաքացի-
կաշտօնի համար, որի մասին, սակայն,
արեւելեան քաղաքացիութեան թէօրիսյով
հեռատեսութիւն են համարում լուրսթիւն
պահպանել: Բայց, մեր կարծիքով, այժմ,
ընտրութեան նախորդ օրը՝ ժամանակ է
խզել այդ գաղտնապահ լուրսթիւնը և խօ-
սել ապագայ քաղաքացիների մասին: Եթէ
կարելի է պրօպագանդա անել ձայնաւոր-
ների ընտրութեան մասին, ինչու նոյն
պրօպագանդան, այն էլ բացարձակ և ազ-

րութիւնները՝ ցեղակից չազատագրուած (non
affranchis) եղբայրներ ունեն օսմանեան և
աւտարիական տիրապետութիւնների տակ, փո-
խադարձաբար յանձնառու կը լինեն այս եղ-
բայրների վիճակի բարելաւումին աշխատել:

5) Գաչնակցական խորհուրդ մի պիտի կազ-
մուի երեք զաչակից կառավարութիւնների մէջ
գոյութիւն ունեցող դատական խնդիրների հար-
թութիւն համար:

6) Սերպիսի, Պուրկարիսի, Չեռնակօրանի վե-
հագետները իւրաքանչիւրը՝ մի-մի պատուիրակ
պիտի խորհի ուսուցչ Կայսրին, որպէս զի բա-
րեհաճի այս միութիւնը իր պաշտպանութեան
տակ անել: Ապա զաչակցիւրը վաւերացուելով
գործադրութեան պիտի դրուի:

Տեղական «Աժան» Պաշտպանը հեռագրական
գործակալութեան ընդունած մի հեռագիրը կա-
ռէ թէ՛ «Նոյն» վրէժի» լրագիր Պուրկարիսի
թղթակցից, Պուրկարիսի-Սերպի-Չեռնակօրեան զաչ-
նագիրն սեպտեմբ աշուր տեսած լինելը հեռա-
գիրով իմացուցած է ի Պետերպոլսի:

Պուրկարիսի անմիջական հարեանը՝ Ռուսա-
նիան, որ ինքզինք այնքան հզօր կը կարծէր իր
բացարձակ կողմնացումի վիճակին մէջ, տարակույս
չը կայ, որ ներգացած կրնայ լինել երեք սլա-
կառավարութիւնների այս աստիճան առաջ եր-
թալով, քաղաքա-բարեկամական այսքան սերտ
յարաբերութիւններ մշակելէն: Իրեն այլած սըր-
տին միխթարանը տալու համար սկսեալիկու-

նիւ ճանապարհով, չէ կարելի անել և
քաղաքացիների մասին, մասնաւոր որ ձայ-
նաւորների ընտրութեան օրը այդ հարցը
շատ մեծ ազդեցութիւն կարող է ունենալ
ընտրողների քուէներին վրա:

Այդ առիթան գաղտնապահութեան,
կամ որոշ պրօգրամ չը մշակելու անմի-
տօրութեան հետեւանքն է, որ հազարա-
ւոր ընտրողներ պիտի գնան քուէ տալու,
առանց իմանալու թէ իրանց ընտրած
ձայնաւորները ինչ պիտի անեն և ում պի-
տի քաղաքացիութիւն ընտրեն:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԳԻՒՂԱՏՆԵՍԱԿԱՆ ՋՐՈՅՆԵՐ

V

Օ ի զ ի օ մ — «Oidum» — Չ ո ո

Թէ օրվայ օր ժամերում պէտք է ծը-
ծու՞մք փչել: Ոչ պակաս նշանակութիւն ու-
նի և այն հանգամանքը, թէ ծծումքը օրվայ օր
ժամին է փչվում: Ծծումքը որոշելու համար պէտք
է ի նկատի ունենալ հետեւեալը. — պէտք է ընտ-
րել այնպիսի օր և օրվայ այն ժամերը, երբ
ծծումքը աջող կերպով կարող է նստել վազի
թիֆերի վրա և այնտեղ մնալ կարելիին չափ եր-
կար ժամանակամիջոց: Այժմ պարզ է, որ չը
պէտք է ծծումք փչել այն օրը, երբ անձին է
գալիս, երբ քամի է և երբ սաստիկ չոր է:
Ծծումքը կարող է նստել թէ թաց և թէ չոր
տեղերի վրա. սակայն, եթէ նա շատ թաց է
և կամ շատ չոր — այդ դեպքում կամ կանոնաւոր
չբոսող չէ տարազուտ տարւոյ բոլոր սաստիկ
վրա և կամ նստած ծծումքը չէ մնում իր տե-
ղում, այլ թափվում է: Երբ ժամանակ չը պէտք
է չաղ տալ և այդ նրա համար, որ տեղի երե-
սին մնալով՝ ծծումքը սաստիկ տաքանում է և
ամենաշուքին չարծումքի թափվում է ցած, որի
ժամանակ կարող է պատահել, որ ծծումքը
կընկնի խաղողի զերաների վրա և նրանց կաշին
կը խանձի: Վնասն ակնհեր է. կաշին կայրվի և
կը կոշտանայ, որի հետեւ և անընդունակ կը
դառնայ ընդհանրապէս. այդպիսով խաղողի զի-
ւան չէ կարող զարգանալ այնքան, որքան որ
խակապէս նա կարող էր: Հետեւապէս ծծումք
պէտք է փչել պարզ, խաղաղ օր, երբ ջերմու-

թեան գիրկը նետուած, առհասարակ ուժա-
նական մամուլը անխառնաճի միջոցներով շա-
հաւատարի կը գտնէ մի այս տեսակ զաչնագ-
րի գոյութիւն ունեցած և ստորագրուած լինելը:

Լրագիրների մէջ կարգադրուածին նայելով,
Ֆերդինանդ իշխան ապրիլի 26-ին, իշխանուհի
Մարիայի և նախարարապետ պ. Սթոյնիօֆի
հետ, Ալեքսանդր թագաւորին նոր այցելութիւն
մի պիտի տայ, և թէ Ալեքսանդր թագաւոր
մայիսի 4-ին պիտի այցելէ Սև լեռի Նիկոլայ իշ-
խանին: Որքան ալ դերասանան և միամիտ լինի
մարդ, անտարբեր աչքը չը կրնայ նայել անկա-
կած այս տաք յարաբերութիւնների վրա, որ
աննպատակ քաղաքական արդիւնք չի բեր
լինել:

Բայց թէ երեք կառավարութիւնների միացու-
մը թիւրքիայի վրա յարմար առիթին յարձա-
կու՞մ գործելու կասկածները կրնայ ներշնչել,
սա մի այն տեսակ հարց է, որին դժուար կը լի-
նէր պատասխանել: Վիէնայէ առնուած հեռագիր
մի կը ծանուցանէ թէ աւստրիական մամուլը կը
զբաղի այս հարցով և թէ արտաքին գործերի նա-
խարարութեան «Ֆրէմդենպոլիտ» լրագիրը կըսէ,
«Սերպիսի և Պուրկարիսի կողմէն օսմանեան
պետութեան նկատմամբ թշնամական զգացում-
ներ տածած և հաւաքական յարձակումով մի նո-
ւա՞նոր հողեր ձեռք անցնել ջանացած միջոցներ»:
Եւրոպան պարտաւորուած պիտի զգայ ինքզինքը
ընդհանուր խաղաղութիւնը չը վտանգելու հա-

թեան բարեխառնութեան աստիճանը կարող է
հասնել մօտ +200 R. Պէտք է սկսել գործողու-
թիւնը արեւ դուրս գալուց մի քիչ յետոյ — ընդ-
հատել չորերը սկսվելիս, այն է մօտաւորապէս
ժամը 11-ին, նորից սկսել ժամը 3-ին ձախից
յետոյ, մինչև արեւ մայր մտնելը:

Ծծումքի ընտրութիւնը: Օրիգինալ բը-
ժակելու համար գլխաւորապէս գործ է ածվում
2 տեսակ ծծումք. 1) ծծումքի ծաղիկ կամ ծը-
ծումքի փոշի (серный цвет, fleur de soufre)
և 2) ծծումք ծծումք (толченая сера, soufre
tritured). Դրանք միմեանցից տարբերվում են
թէ իրանց «թիֆական» բաղադրութեամբ և թէ
ֆիզիկական յատկութեամբ: Այդ զանազանու-
թիւնը առաջ է դալիս պատրաստելու եղանա-
կից, որի մասնաւորութեան մէջ մտնելը մեր
նպատակը չէ:

1) Ծծումքի փոշու (ծաղիկ) հատիկները դըն-
դաձն են, խորտ ու բորբ մակերկրային, իսկ
ծծումք ծծումքը՝ ներկայացնում են ծծումքի
ամբողջ բերաններ և կամ բերանի կտորներ,
հետեւապէս սուր սուր կողմերով: Այդ իսկ պատ-
ճառով ծծումք ծծումքի հատիկը աւելի հեշտ է
նստում տեղին վրա և աւելի էլ երկար է մը-
նում կպած, քան ծծումքի փոշունը: 2) Ծծում-
քի փոշին իր մէջ պարունակում է աւելի մեծ
քանակութեամբ ծծումքի թու, քան ծծումք ծը-
ծումքը, այդ պատճառով էլ ջերմութեան բարձր
աստիճանի ազդեցութեան տակ առաջինը սա-
տիկ խեղդող հոտ է տարածում, որը վնասակար
է նոյն իսկ բանտարի համար, քանի որ այդ հոտը
զատ է արդուս շնչառութեամբ վրա: 3) Ծծումքը
փոշին աւելի թանգ է քան ծծումք ծծումքը:
4) Ծծումքի փոշին աւելի մասնաբաժնւորութեան
մէջ է գտնվում, այսինքն նրա մասնիկները աւելի
մանր են, քան ծծումք ծծումքը, թէ և վերջինս
եթէ լաւ տրորում են մի քանի անգամ և մանր-
աչք մաղով մաղում են, համարեա թէ հասնում է
առաջինի զորութեանը:

Այս բոլորը աչքի առաջ ունենալով, իսկապէս
առաւելութիւնը ծծումք ծծումքի կողմն է, սա-
կայն մեր երկրի համար պէտք է գերադասել
ծծումքի փոշին, քանի որ ծծումք ծծումքը մօտ
1/3 անգամ աւել է գործածվում, քան ծծումքի
փոշին մի և նոյն տարածութեան համար, որն

մար միջամտել յամառ շարժումները կանցնե-
լու համար. եթէ Եւրոպան հաւաքաբար չանի
այս բանը, մօտաւոր պետութիւնները առանձին
պիտի գործեն:

Մինչ Ռուսիային կը ներդնայ և Աւստրիան
sous entendu կը սպառնայ, աստիճան պուրկարա-
կան հակառակ կուսակցութեան պատկանող չօ-
վին մամուլը կատարի պաշար մի կը մղէ նա-
խարարապետ պր. Սթոյնիօֆի դէմ, «ազգային
չափերը վտանգող, մատնող» հռչակելով զայն:
Իրենց համար Պաշտանի մէջ մի երբեք զաչնակ-
ցութեան դէպք ցոյց տալը պարզապէս մակեդո-
նական հարցը պուրկարական ազգային չըջանա-
կէն հանելով զայն պառակտել, աշխարհաքաղա-
քացի դարձնել կը նշանակէ: «Մակեդոնիան Պուր-
կարիային է և Պուրկարիային պէտք է մնալ,
կանեն նոքա, առ այս կապուել Սերպիսի և
Չեռնակօրայի հետ, կը նշանակէ պատասխանել
խոստանալ նոքա ալ, չը վտանգի իր բազմակերպ
ոյժին, այն բազմակերպին, որ Պաշտանի մէջ
այնքան անուշ, նշանակութիւն են ունեցեր:»
Սոցա առաւելութիւններին կը փութայ պատառ-
խանել պր. Սթոյնիօֆի բերան «Բրոկրես» սա-
լակօնական բառերով: «պուրկարական մի կարգ
թերթերի ենթագրութիւնները սխալ են. Պաշ-
տանեան զաչնակցութիւն մի կրնայ լինել, այլ
Մակեդոնիայի բաժանում երբէք:»

Դ. Կ.

ազատ կերպով լրացնում է նրանով, որ նա էլ համարեա 1/3 անգամ առաջինից էփան է: Սակայն ծծումբ ստանալու համար իր արժեքի չափ էլ ճանապարհի և այլ ծախսերն են աւելանում, այդպիսով ծծումբ ծծումբը աւել է գնում 1/3 անգամ, իսկ արժեքը պակաս է լինում 1/6 անգամ. պարզ է, որ կորուստ է առաջ գալիս: Ուրեմն մեր երկրում օդիօմի դէմ պէտք է գործ ածել ծծումբի փոշի (ծաղիկ—серный цвет—fleur de soufre):

Երբեմն էլ ծծումբի հետ խառնում են աւաղ, շատ մանրահատիկ տեսակից, ի հարկէ, կիր և այլն: Կիր խառնելը կարող է օգտակար լինել այն այգիների համար, որոնց հողը սև է և կրի հարկաւորութիւն ունի: Խողովակաձև բերեղաւոր ծծումբը արօրելով՝ ստացվում է ծծածած ծծումբ:

Ծծումբի յատկութիւնը որոշելու համար պէտք է մի պտղունց վերցնել և մատերի արանքում ամուր սեղմած ընկղմել (ծխել) ջրի մէջ և իսկոյն դուրս հանել. եթէ ծծումբի մի մասը թրջվի, նշանակում է նրա հետ կան խառն կողմնակի նիւթեր, իսկ եթէ ոչ—դա նշանակում է ծծումբը լաւն է: Ծծումբը կարող է խոնաւանու և իւրար կպչել—այդ պատճառով լաւ չի փշվի. դրա համար էլ գործածելու նախորդ օրը կարելի է նրան արեւի տակ չորացնել: Մի քաթանի չորի վրա պէտք է փռել բարակ չերտով և 2—3 ժամ թողնել արեւի տակ և ապա հաւաքել:

Մ. Մուսինեանց

ԿԻՐԻՆ ՀԱՅ ԳԱՂՔԱԿԱՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

(Նամակ գեղեցիկ)

...Անա տեսնում էք գիւղի խուլ անկիւնում մի բոլորովին թշուառ գաղթական, լաթերի մէջ պալտոված՝ գլխկոյր քայլում է անվտանգ, մըտախոհ: Նրա յետևից նոյնպէս կենը՝ տկուր գաւակներէ մէկի ձեռքը բռնած, մի ուրիշ մատուցալ երեխայ էլ գլխին առած: Նրանք անհամարձակ դիմում են մէկին, միւսին և օգնութիւն խնդրում: Սակայն ստացած կօպէկները ոչ մի կերպով նրանց չեն բաւականացնում. շատ քիչ են, քիչ անօթի: «Պետեւ-ըմ-կաթ, մարէ», մրմնջում է տղան մօր ախանջին. «Փշուր-ըմ-խաց», աղբնում է մի ուրիշը... Դրանք, իբրև անակալան թոթովանքներ, այդ որբիկների սովորական աղբասանքներն են, որոնք զարկվելով լսողի ախանջին՝ նրա սիրտն են կտրատում, ջիգեարը դադարում...

Հայ գաղթականների օգնութեան գործին շատերը մասնակցեցին. Եւրօպայի զանազան կողմերից, Ռուսաստանից և նոյն իսկ հեռավոր Ամերիկայից, մարդիկ զրգոված մարդասիրական զգացմունքներից՝ օգնութեան են գալիս թշուառացած հայ գաղթականներին: Երբ օտար աղքատները շտապում են իրանց լուծանք գցել հայ-գաղթականների օգնութեան գանձարանը, այդ զէպրում, կարծում ենք, որ հայ հասարակութեան, մանաւանդ հայ հարուստների պարտականութիւնն է նոյն իսկ զոհաբերութիւններ անել իրանց տարաբնու բեղալիքների և քոյրերի համար, որոնք մի հաստատ տեղ անգամ չունեն իրանց գլուխը դնելու...

Հայրենասիրութիւնը միացած մարդասիրութեան հետ ստիպում և բարոյական պարտք է դնում հայերի վրա՝ անալոյման օգնել թիւրբաց գաղանդութիւններից իրանց գլուխը աղատած հայ-գաղթականներին: Սակայն, մեր հարուստներից շատերը ոչնչով դեռ ևս չեն մասնակցել այդ թշուառ գաղթականների օգնութեան գործին: Որպիսի անդալալութիւն: Միթէ «Փաղաք վուրդունի» և «Պետեւ-ըմ-կաթի» զոհերը, կամ «Փշուր-ըմ-խաց» աղբասանքների և նրանց վիճակակիցների դրութիւնը՝ բարոյապէս չէ ազդում հայ հաստատների քարացած սրտի վրա, որոնք ճոխ սեղանների շուրջը նստած, հաւատացած ենք, չափ պայանի աշուղ են լսում աղքատների կենաց թափը...

Գ. Ս.

ՆԱՄԱԿ ԷԶՄԻՍՏՆԻՑ

Մայիսի 2-ին

10—15 տարի առաջ էջմիածնում մայր տա-

ճարի երգեցողութիւնը այնքան զրաւիչ էր ու թաղար, որ կիրակի օրերը չըջալայ գիւղերից և երևանից բաւական բազմութիւն էր գալիս պատարագին ներկայ լինելու, իսկ տեղացիները հօ, աւելորդ է ասել, լցնում էին վանքը: Իսկ այժմ... այժմ բառի բուն նշանակութեամբ երգեցողութիւնը բացակայում է. չենք պատահել մի օտար մարդու, որ պատահմամբ լսած լինի մայր տաճարի երգեցողութիւնը և զգոգոնութիւն յայտնած չը լինի, իսկ միաբանութիւնը, որ համեմատաբար պակաս հասկացողութիւն ունի երգեցողութեան մասին և մասամբ էլ ամեն օր լսելով նոյն անկանոն երգեցողութիւնը պիտի ընտելացած լինէր դրան, նոյնպէս զգոգոն է լինի է պատճառը, ով է մեղաւորը:

Մենք մեղադրում ենք այն վարչութեան, որի ասաներն են երգիչները: Հիմարանք, որ իբրև հոգևոր բարձրագոյն դպրոց աշխատում է իր ասաներին կրօնական կրթութիւն տալ, բարձիթող է արել կրօնական աղքատ ֆակտորներից մէկը: Եթէ հիմարիտ է Արարատում տպւած եկեղեցական երգեցողութեան մասին կոմ. վ. յօդուածը, որի մէջ ճարձատիւն բառերով է նկարագրվում այն հոգեմայլ դրութիւնը, երբ աղօթողը լսում է ներդաշնակ երգեցողութիւնը, եթէ «Արարատ» հիւրընկալելով այդ յօդուածը համակարծիք է դրան, այն ժամանակ ինչով բացատրել այսօրվայ երգեցողութեան անկանոնութիւնն ու անկարգութիւնը, եթէ աւելին չասնենք: Երբ պիտի դրանց խօսքի, գրչի և գործի մէջ համեմատութիւն լինի...

Անա երբորդ տարին է ճեմարանում եկեղեցական երգեցողութիւնը յանձնված է Ղևոնդ վարդապետին, որը չարակամներից դուրս օրիշ բան չը գիտէ: Մենք կարծում ենք, որ հայր Ղևոնդն էլ շատ գոհ չը պիտի լինի այդ պաշտօնից, բայց ճեմարանի վարչութիւնը պիտի է բռնել նրան, երեւի խնայողութիւն անելու մըտքով, որպէս զի այդ խնայած փողերով միւս աշխարհական պաշտօնեաները լիւրի ստանան: Մենք դէմ չենք լրիւ վարձատրութեան, լինի դա հոգեբարական, թէ աշխարհական պաշտօնեայ, բայց մէկը միւսին զոհեն և փչացնել թէ աշակերտների ճաշակը և թէ ունկնդիր աղօթողները: Եթէ անհրաժեշտ է:

Օրի մէջ պտտում է մի լուր, որ իբրև եկող տարվայ համար մտադրութիւն կայ հրաւիրել Գէորգ սարկաւազ Չեօրէշեանին. թէ ևս անհաստատալի, բայց ցանկալի է այդ լուրի ճշգրտելը: Գոնէ եկեղեցական երաժշտութիւնը կը բարձրանայ այժման ընկած դրութիւնից:

X.

ՆԱՄԱԿ ԿԱՐՍԻՑ

Մայիսի 4-ին

Վերջապէս, երկարատև բացակայութիւնից յետոյ՝ մեր յաջորդ լիշիչ վարդապետ Մուրադեանց վերադարձաւ այստեղ և անցեալ կիրակի օրը մի համառօտ քարոզով յայտնեց ժողովրդին իր կատարած գործի մասին: Նա յայտնեց, որ իրան աջողվել է հոգալ մի նոր ուսումնարանի բացման մասին, որը կը լինի գիւղատնտեսական-արհեստագիտական դպրոց և կը բացվի այս տարվայ սեպտեմբեր ամսից: Ուսումնարանը կունենայ չորս դասարան՝ եօթնամեայ դասընթացով: Նրանում կաւանդվեն երկրագործութիւն, մեղուբուծութիւն, կաթնատնտեսութիւն և երեք տեսակ արհեստ: Դասաւանդելի առարկաները կը լինեն 22, որոնցից 18-ը կաւանդվեն հայոց լեզուով, երեքը ռուսերէն և մէկը՝ հայապատկանութիւնը հայոց և ռուսաց լեզուներով: Նա ասաց, որ չուտով կը տպագրվի այդ նախագիծն ուսումնարանի ծրագիրը և մենք այն ժամանակ միջոց կունենանք աւելի երկար խօսելու այդ մասին: Առ այժմ պարզ է այն, որ այդպիսի մի ուսումնարան համեմատաբար մեծ ծախս կը պահանջէ, ուստի և շատերը թերահաւատութեամբ են վերաբերվում դէպի այդ նախատակի իրագործումը: Բայց եթէ մտաբերենք, որ նոյնպիսի թերահաւատութիւն երևում էր և անցեալ տարի՝ երբ յաջորդ ձեռնարկեց մի շարք կրթական շինութեան և որը այսօր կատարված իրողութիւն է, առիթ չը պէտք է լինի կասկածելու, որ երթադրված ուսումնարանը ևս կը բացվի: Աշխատասիրութիւնն ու եռանդը յաղթում են ամեն խոչընդոտների: Գամենայն

դէպս՝ քաղցր և միմիկարական է մեզ տեսնել այնպիսի հոգեբաններ, որոնք հոգեբանականութեան ներկայ սոսկալի անկամն միջոցին, բացառիկ եռանդ և գործունէութիւն են ցոյց տալիս:

Մարդու սիրտը լցվում է արիւնով, երբ կարդում, նոյն իսկ աչքերի առաջ տեսնում է այնպիսի հոգեբանականներ, որոնք բացարձակապէս հակառակ են գործում, քան թէ պիտի գործէին: Խօսել հայ հոգեբանականութեան մասին՝ կը նշանակէ խօսել մի այնպիսի ցաւի մասին, որի ճարը տանեակ տարիներից ի վեր իղուր ճգնում է դռնէլ հայոց սրտացաւ մամուլը, որովհետև ամենայն ձիգ, ջանք, առաջարկութիւն փշրվում է այն յամառ յետադիմութեան առաջ, որը քանի գնում կրկնապատկւում է այն անտէր վիճակի չորհիւ, որը տիրապետում է հայոց Աթոռանիստ վանքում և Խլուր ցոլերը անդրադարձնում դաւաճանքում: Բնորոշ է այն իրողութիւնը, որ երբ սրանից երկու տարի առաջ Արշէն երեցի յօդուածի առիթով «Մշակ» բողոքեց, մեր Հայաստանեայց եկեղեցու երդուեալ կեղծաւորները աղմուկ բարձրացրին. «հայոց եաց, հայոցեաց» աղաղակեցին նրանք: Բայց սուտի փոխերը կարճ են. քիչ ժամանակից յետոյ ի տես համայն աշխարհի յայտնվեց, որ Արշէն երեցը իր ասելիքը գեռ չէր Լաւարտել, բայց պաշտպանները չառապել էին պաշտպանել: Եւ անա այսօր չքաւորներին մեռելները չարախով անխաղ են մնում, գիւղ, քաղաք տգէտ քահանաներով լցվում է, արժանաւորները մասնվում են անուշադրութեան, հալածանքի, իսկ անարժանները վարձատրվում են: Մեր հովիւները այնքան անձուկ են, որ նոյն իսկ յայտարարութիւններ են տպվում, որ այն ինչ քահանան պատրաստ է ընդունել չքաւոր դիմողներին և... Այսպիսի բարձրագոյն, ակնյայտի խայտառակութիւնները տեսնելուց յետոյ, մեր կեղծաւոր մամուլը կամայ ակամայ արձանագրում է այդ անսօրվալ երեւոյթը և լռելեայն համաձայնում «Մշակի» տարիներ առաջ ասածներին:

Z.

ՆԱՄԱԿ ՄՈՍԿՎԱՍԻՑ

Ապրիլի 20-ին

Իմ գրած անցեալ նամակը Մոսկվայից՝ բաւականին զայրացրեց այստեղի մի ռուս գեղին, որոնք իսկոյն տեսան այդ թղթակցութեան մէջ իրանց պատկերը ու ահալին իրաւանցում բարձրացրին: Դրանք բարոյական քաջութեան նշոյլ անգամ չունենալով, որ լրագրի միջոցով հերքեն թէ անցեալ նամակում, թէ զրանից առաջ գրածները, սկսեցին այս ու այն տեղ փոխաւ ու իրանց սաղօններում ճառել, թէ գրածը սուտ է, թէ «Մշակը» կապիտալիզմի թշնամի լինելով, ստախոսութեամբ է պարտապում իմ թղթակցութեան նման սուտ բաներ տպելով, միշտեւ Մոսկվայում ամեն ոք իբր թէ գիտէ, որ սուղերի ի ինքնակոչ բարիններն մէջ գեռաւ չը կայ և այլն: Եւ ձեռք, պարոններ, երբեք չէի պատասխանի, ինչպէս չեմ պատասխանում և այն ձեր խօսքերին, որ դուք թոյլ էք տուել ձեռք ասել իմ մասին միայն, բայց որովհետև դուք համարձակվում էք դիպչել իմ գրչին, որը, ճիշդ է, ձեռք նման ուրիշից ստացվող տոկոսներ չէ հաշուել ու կօպէկներ չէ գումարել: Բայց զբաղվել է ի միջի այլոց նրանով, որ ձեր կեղտոտ գործերը ու արարքները ժամանակ առ ժամանակ ի լոյս է հանել, և որովհետև դուք համարձակվում էք դիպչել այն լրագրի պատուին, որը ուրիշների նման ձեռնից հաղարներ չէ ստանում ու ձեռքանից չաղչաղ ճաշեր չէ վայելում, այլ ձեռք միտ ձեր անունով է անուանում,—այդ պատճառով անպատասխան չենք թողնի ձեր վայրահալութիւնները:

Դուք, պարոններ, վրդովվում էք, որ ձեր արարքները անբարոյականութիւն ու գեռապաշտութիւն ենք անուանում ու գոչում էք, թէ դա զրպարտութիւն է ու սուտ է: Համեցէք, պարոններ տղաք, ես կը ինչեմ ձեր արած բաներից մի բանիս, և այժմ էլ համեցէք ասացէք, որ այդ սուտ է ու ձեր արարքները գեռաղաւթիւն չեն: Երբ սրանից մի երկու տարի առաջ ձեռք մօտ եկան երկու նորիկ երիտասարդներ ու Գասպարեան անկեղանոցի գումարներից ուսման փող խնդրեցին, դուք չէիք, որ ասացիք,

թէ ուսումը յիմար բան է, թէ ուսումն առնողները կորած մարդիկ են, և այլ այդպիսի երեւելի խեղճ բաներ: Դուք չէիք, պ. միւլիօնչիկներ, երբ սրանից 2—3 տարի առաջ կարախ նահանգում սով էր ու դուք փող չը ժողովեցիք միայն այն պատճառով, որ ամեն մէկը ձեռնից գործի գլուխն էր ուղում կանգնել, գործիչի (!) անուն վաստակելու համար. դուք չէիք այդ Դուք չէիք, երբ այստեղ մեռաւ մի հայ պրօֆեսոր և երբ ձեռք առաջարկեցին փող ժողովել ու հանգուցեալի անուամբ մի ֆօնդ կազմել, համապարանում, չքաւոր հայ ուսանողների համար, դուք չէիք, որ յայտնեցիք, թէ կօպէկ չէր տայ ուսանողին: Դուք չէիք, որ եօթ հոգուց ժողով կազմեցիք ու ինքներդ ձեռք պատգամաւոր ընտրեցիք ու ներկայանալով Օդեսայում կաթողիկոսին յայտնեցիք, որ ձեռք ընտրել է Մոսկվայի հայ հասարակութիւնը (որի անդամներ թիւը հազարից աւել է), այդ էլ դուք չէիք: Դուք չէիք, երբ սրանից մի երկու շաբաթ առաջ Գասպարեան անկեղանոցում, ժողովի ժամանակ, երբ ձեռք առաջարկեցին որքան կամենաք փող ստորագրէք մի կարևոր գրքի հրատարակութեան համար, դուք չէիք, որ մերժեցիք ու յետոյ յանդիմութիւն ունեցաք կասկած յայտնել մի մարդու պատուի մասին, որը ոչ թէ երբեք տօկոսներ չէ դրել զրպանը, այլ սուղ կոս բառը անգամ դժուար է հասկանում, դուք չէիք այդ էլ: Դուք չէիք, պարոններ, երբ որ ձեռք առաջարկեցին ստորագրել բողոք այն քահանայի դէմ, որը սուրբ տաճարում կարդաց սուղթանի ֆերմանը, դուք չէիք, որ մերժեցիք ստորագրել ու կամեցաք մինչև անգամ պաշտպան հանդիսանալ նրան, դուք չէիք: Դուք չէք, որ ուսանողների օգտին ժողոված գումարին տէր էք ուղում հանդիսանալ ու յայտնում էք, որ փողը չը տաք ոչ թէ նրան, ում կը նշանակէ ուսանողութիւնը (համաձայն նուիրատուների ցանկութեան), այլ ում դուք կը բարեհաճէք, դուք չէք այդ: Դուք չէիք, որ կարդալով իմ անցեալ նամակը Մոսկվայից «Մշակի» մէջ, յայտնեցիք, որ դրանից յետոյ ուսանողներին օգնելը անկարելի է: Այդ ամենը դուք չէիք: Եթէ դուք չէիք, ապա ով էր—չխնայոց կայսրը հօ չէր: Չորս ասեմ, զորն խոտովանիմ: Չեր ուրիշ արարքների մասին ես էլ չեմ խօսում:

Եթէ, պարոններ, այդ ամենը սուտ է, հրաւիրում եմ ձեռք հէցն նոյն իսկ «Մշակի» միջոցով հերքել ասածներս ու այդպիսով ապացուցել, որ սուտ եմ գրում ես, և ուրեմն սուտ բաներ է տպում «Մշակը». բայց եթէ դուք բարոյական բազմութիւն չէք ունենայ այդ անել ու զարձեւալ կը շարունակեք այս ու այն անկեղաններում ու ձեր սաղօններում ինձ ստախոս թղթակցի անուանել, այն ժամանակ ինձ ուրիշ ոչնչի չի մնայ, բայց եթէ համաձայնել ձեռք հետ, որ իրաւ ձեր բոլոր արած կեղտոտութիւնները ու գեռապաշտութիւնները ոչ այլ ինչ են, եթէ ոչ բարձր բարոյականութեան արտայայտութիւններ: Բայց և այնպէս, պարոններ, միշտ յիշեցէք, լաւ յիշեցէք ու երբեք մի մոռացէք այն իմաստալից առածը, որը ասում է թէ՛ «на зоркато неча пеняты, коль рожа крива».

Ա. Կաճկաճեան

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԱՆ

Թիֆլիս, մայիսի 9-ին

Խնդրում եմ «Մշակ» լրագրի էջերում տեղ տաք հետեւեալ նամակին: Չորս ամիս սրանից առաջ, տեսնելով որ գաղթականների հոսանքը քանի գնում շտապում է, կատարելով մի բարոյական պարտք՝ խնդրեցի մեր ծխաւէր Յովհաննէս քահանայ Մարտիրոսեանցին՝ դիմել Բարեգործական ընկերութիւնին՝ առաջարկելով մի գաղթական հայ ընտանիք տեղափոխելու Չուղուրէթի ու Աստուածածնի եկեղեցու մի դասարան սենեակը, խոտախալով իմ կարողութեան չափ. խնամել նրան: Այդ խնդրեքը չուտով կատարվեց: Սօտ օրերս ստանում եմ յիշեալ եկեղեցու երեցիկներից հայր Խարաղեանի նրան գրած նամակը (որն այժմ Բարեգործական ընկերութեան դիւանատանն է), որով պատուիրում է դատարկել 40 օրով գաղթականներին սենեակը, որպէս զի մի նորընծայ քահանայ այդտեղ անցկացնի իր տընութեան օրերը: (Մասնաւոր աղբիւրից իմացայ, որ յիշեալ եկեղեցու Յարութիւն քահանայ Տէր-Ջաւարեան ծա-

բեկոյեան ժամի 8-ին: Էջեմ-փաշան իր ամբողջ զօրքի զուխն անցած՝ կատարել յարձակում գործեց թագաժառանգի դռքի դէմ: Մի քանի յարձակումներ, որ անում էին թիւրքերը կենտրոնի և ձախ թիւի դէմ, յետ մղվեցան, լուրջ շնասիրտ պատճառներով նրանց: Իսկ աջ թիւի դէմ արած յարձակումը հարկադրեց յայնքին յետ քաշվել և թողնել իրանց ռազմական դիրքերը առանց նշանաւոր շնասիրտի. այդ թիւի առաջ էին թիւրքերը կենտրոնացրել իրանց զլխաւոր ուժերը ըստ թիւի թիւանոթների հետ: Մի ուսմը ընկաւ փամփուլաների արկով լրա, որ պայթեց, և զնդապետ Մարմարիսիանի վերջ պատճառեց: Գլխաւորներ քայլերը երեւել քաշուով ինչ որ տուին, ներկայ լինելով պատերազմի դաշտում: Թագաժառանգը ձի հեծած մասնակցում էր կռիւն յոռաց զօրքերի առաջաւոր շարքերում և ղեկավարում էր նրանց: Յոյները հերոսաբար էին կռուում: Սա երկրորդ մեծ ճակատամարտն էր, որին թիւրքերը մասնակցում էին յայնքի թիւի շատ մեծ թիւով: Նրանք ունէին մօտ հարիւր թիւանոթ: Թիւրքերի կորուստը շատ մեծ է, յայնքի կորուստը նշանաւոր:

Երբ ուսում Պարիզից հեռագրում են, «Արտաքին» ստացված է տեղեկութիւն, որ Գոթֆրիդ-պոլիսի քրիստոնէական միաց իր դիրքերի վրա, չէ նախ թիւրքերի սպանիչ կրակին. թիւրքերը օգնութիւն էին ստացել թիւրքաթիւրքների պահեստից: Յոյները կորցրին 550 զինուոր և 33 օֆիցեր: Գնդապետ Պապանանուպոլիսի մահը զօրեղ ապագայութիւն գործեց: Պարիզի Մանեսիս, մահացող վերջ ստացած լինելով ճակատի և կողքի վրա, անդադար կանչում էր. «Առաջ: Չորս մարդ հարկաւ - կարողացան պահել նրան: Զինուորների ղեկավարութիւնը զարմանալի է: Նրանք անընդհատ կռոււմ էին 48 ժամ շարունակ անձրիի տակ և համարեա առանց կերակրի: Նոյն իսկ թիւրքաթիւրք լրագիրները հաստատում են այս տեղեկութիւնները:

Եւ ինչպէս կ'օնստանա Կիւսիս Ինչպէս հաղորդում է «New-York-Herald» լրագիրը «յուրաց Ժաննա դ'Արկ» անուանված այս օրերու, որի մասին անցեալները տեղեկութիւններ տրւեցին «Մշակի» ընթերցողներին, վերաբերված է Եգիպտոսում, Լուրսի կուրի ժամանակ:

Ռուսաստանի միջամտութիւնը վերջնապէս «Temps» լրագրին հեռագրում են, մայիսի 4-ից, թէ լուր է պտտում, որ Ռուսաստանը պատրաստ է երաշխաւորել Յունաստանից պահանջվող պատերազմական սուղանքը այն դուրսի չափ, որ Բ. Գուստը ղեկ ևս պարտ է մնացել Ռուսաստանին 1877 թվ. պատերազմի ժամանակից:

Թէ սաւառի գրաւումը «Новости» լրագրի Կ. Պոլսի թղթակիցը պատմում է, որ թիւրքիս իրան արդէն թեւաւորապէս կատարեալ տէր է համարում և արդէն մարտանք մի բարձր-աստիճան պաշտօնեայ ուղարկեց Վալու: Բացի զընտրեց առում են, որ աջի առաջ կան արդէն նախապաշտաներ և փոխնախապաշտաներ այդ նահանգի համար: Թիւրքիսի այդ քայլերից երեւում է, որ թիւրքերը դիտաւորութիւն չունեն հեռավոր թեւաւորապէս, և շատ կարելի է, որ զբաւուրը շարունակվի մի քանի ամիս, կամ մի քանի տարի, մինչև որ Յունաստանը չը վճարի ամբողջ պատերազմական սուղանքը:

ՆԱՄԱԿ ՊԱՐՍՈՒՄԱՆԻՑ

Թաւրիզ, ապրիլի 27-ին

Մեր քաղաքն այժմ կատարեալ խաղաղութեան մէջ է. պարսիկները սաստիկ ամաչում են հայերին և քաշվում: Պարսից կառավարութիւնը հայերի ապահովութեան համար ոչինչ չը ինչպէս: Քիչ չը նպատակեց այդ ապահովութեան և ուստաց կառավարութեան ներկայացուցիչը, որի ձեռք առած ազգու միջոցները միանգամայն սխալներն մոլեռանդ խուժանք: Ամիր-Նիզամն այս երկու օրս ուստաց հիւպատոսարանին պէտք է ուղարկել կաղապարած աների ապրանքի արժէքը. տների նորոգութեան ծախսը արդէն ուղարկել է և ընդունած տները նորոգվել են: Ամիր-Նիզամն

այժմ զբաղված է հացի խնդրով: Այդ խնդիրը կարգադրելուց յետոյ՝ պէտք է ձեռնարկել պատ-ժել խռովութիւն գոյններին և աւարառուներին: Այստեղի թիւրք Ֆանատիկոս խուժանք, թիւրքիսի հայերի կոտորածներէից յետոյ, ուրիշ աչքով էր նայում հայերի վրա, բայց այժմ նա եկել է այն համոզմունքին, թէ հայն անտէր աղք չէ:

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Տխրան ուն հեռուում «Անգլիայի Դոն Կի-չոտ Ալմէտ Բարոլէտ դադար չէ առնում: Նրբ յայնքի ձեռքը զերի ընկնելուց յետոյ՝ ազատվեց, նա իսկոյն ուղեւորվեց Կ. Պոլսի, ուր խընդեց սուլթանից ունկնդրութիւն: Սուլթանը ընդունեց Բարոլէտին իր զինուորում ամենամեծերիմ կերպով: Բարոլէտ յայտնեց, որ ինքը լաւ ծանօթանալով յայնաց թագաւոր Գէորգի հետ՝ համոզվեց, որ վերջինս խաղաղասիրութեան կողմն է և կը ցանկանար թիւրքիսի և Յունաստանի մէջ մշտական մտերմութիւն կա-յայնել սպալաւի համար: Սուլթանը համա-կրութեամբ լսեց այս խօսքերը: Սակայն նոյն Ալմէտ-Բարոլէտ մի նամակի մէջ, որ գրել էր Սալոնիկից, երբ ղեկ գերի էր ընկել, խնդրում է յայտնել սուլթանին հետեւել: «Նոյնքիմ տե-ղեկացնել իմ կայսերական բարեկամին, որ ես յոյս ունեմ մի քանի օրից յետոյ առաջինը մտնել Լարիսսա և ուղեկցելով նրա յաղթական զօրքին հասնել Աթէնք: Անուշեան ես այնտեղից կը յառաքեմ Կ. Պոլսի, ուր առաջինը կը գտնուի, որ կը շարունակեմ Նորին Մեծութեանը այն գեղեցիկ դասի համար, որ նա առեց ին-չօր յոյններին:»

Այդ փաստից յետոյ միթէ մենք իրաւունք չունենք փոխել Ալմէտ Բարոլէտի անունը և ղեկ Ամատ Բարոլէտի օղի:...

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՅ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆՆԵՐ

ՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ ԲԵՄԻՑ

Կ. ՊՈԼԻՍ, 13 մայիսի: Էջեմ-փաշան հեռագրեց միւրիստին, որ Լարիսսայում, Վալուում, Ֆարաւում և Գոմօլուում թիւրքերի ձեռքում մնացած ապրանքը հետեւեալն են՝ 17 թիւրք-նոթիներ, 34,318 թիւրքաթիւրքի պատկանելիք-ներ, 95 ռուբլիներ, 96 սպլեր, 3169 հրա-ցան, 12,344 արկղեր հրացանի փամփուլանե-րով և զանազան զինուորական մթերքներ:

ՎՈԼՈ, 13 մայիսի: Զինուորական աղէնները հասան Վալու: Պաշարման պատճառով, այստեղից ծովային ճանապարհով դնալ չէ կարելի: Հէլէ-նական նաւատորմը բռնեց «Աւստրիական Լոյ-դի» երկու չորհնաւ: Վալուում հանգստութիւն է տրուում:

Աթէնք, 13 մայիսի: Թերմոպոլիսում կազմված է պաշտպանութեան երկու զին: Երբ տեղեկութիւններ ստացվեցին Էջեմ-փա-շայի յայտարարութեան մասին, թէ ինքն անմի-ջապէս բանակցութիւններ կը վարի Յունաստա-նի հետ, կառավարութիւնը յայտնեց պետու-թիւնների գնապաններին, որ Յունաստանը յանձ-նեց իր յանքը պետութիւններին, այդ պատճա-րում ոչինչ առիթ չը կայ անմիջական բանակ-ցութիւններ սկսել թիւրքիսից հետ:

ԼՈՆԴՈՆ, 13 մայիսի: Համալսարանի ժողովը կըրգուն յայտարարում է, որ պետութիւնները միաբան են կրեւելին ինքնավարութիւն տալու հարցում սուլթանի գերիշխանութեան տալու ընտրվում են միայն նախագծի մանրամասնու-թիւնները: Այսպէս կըրգուն հաղորդում է, որ զինա-դադարը յայնքի և թիւրքերի մէջ գրված է Տա-րացի բլուրի վրա, Լաւիայի մօտ, և սկսվեց նոյն օրն և էթ: Երկու կողմերի զօրքերը պահ-պանում են իրանց զրաւած դիրքերը: Զինադա-դարի ժամանակամիջոցը չէ յիշված: Թիւրքաց հրամանատարը թէստիւայում այն կարծիք է, որ զինադադար կապված է 15 օրով:

Կ. ՊՈԼԻՍ, 14 մայիսի: Մայիսի 13-ին ղես-պանների խորհրդակցութիւնից յետոյ, Բ. Գրան արուած է յայտարարվել պատասխան նրա առա-ջարկած հայտութեան պայմաններին: Յայտարար-րը շնորհակալութիւն է յայտնում զինադադարի համար և հաղորդում է, որ ղեսպաններին յանձն-ված է հայտութեան բանակցութիւնները վարել: Պայմանների վերաբերմամբ հետեւեալ հիմքերն են ընկած: Բ. Գուստը երաւունք ունի սահման-ները ուղղելու առաջակցի արշաւանքներից պաշտպանվելու և ռազմական նկատմունքով, նոյնպէս և պատերազմական ծախսերի փոխարի-նութիւն ստանալու, որը, սակայն, պէտք է հա-մապատասխան լինի իրաւունք եղած ծախսերին ու վնասներին և Յունաստանի ֆինանսական ոյժերին: Վերջապէս էթէ այժմեան դրութեամբ ոչնչացած զայնազորներ հարկ լինի վերանորոգել այս վերանորոգումը չը պէտք է վերաբերի այն արտոնութիւններին, որոնք պետութիւնները իր ժամանակին տուել են Յունաստանին:

Կ. ՊՈԼԻՍ, 14 մայիսի: Դեսպանները յանձնե-

ցին Բ. Գրան յայտարար, որ պառնշակում է պետութիւնների պատասխանը թիւրքերի ա-ռաջարկած հայտութեան պայմաններին:

Կ. ՊՈԼԻՍ, 14: Լուր է պտտում, որ սուլթա-նը հեռագրեց զերմանական կայսրին խաղա-ղութեան պայմանների մասին, և այդ պատճա-ռով Բ. Գրան պատասխանը յայտարարելու ուշա-ցաւ: Գերմանական ղեսպանը ղեկ ևս վերջնա-կան հրահանգներ չէ ստացել: Պաշտպան շըր-ջաններում և Բ. Գրան մէջ այն կարծիքն է տի-րում, որ թիւրքիսն կը սկսի իր նախկին պայ-մանների վրա, բայց որովհետ Բ. Գուստը ստիպ-ված կը լինի անպատճառ զիջել, այդ պատճա-ռով միւրիստութեան փոփոխութիւնը հաւանա-կան է համարվում:

Երէկ ղեսպանները քայլեր արեցին թօքաթի վերաբերմամբ: Նրանք պահանջում են, որ յան-ցաւորները մահվան պատժի ենթարկվին կամ ուրիշ դատաւժիբի այն պատճառով, որ մահմա-կանների տրամադրութիւնը այնտեղ երկիւղ է ներշնչում: Դեսպանները բողոքում են այն պաշտօնատար անձանց արդարացեալութեան դէմ, ո-րոնց մասնակցութիւնը կոտորածին ապացուց-ված է:

ԼՈՆԴՈՆ, 14 մայիսի: «Մէյնից» «Times» լրա-գրին հեռագրում են, «Այստեղ կրկին թշնամա-կան արամադրութիւն է սկսվում այն անձանց դէմ, որոնց պատասխանատու են համարում պատերազմի և կրած պարտութիւնների համար: Կառավարութիւնը յանձնագործ կը նշանակի մեղադրանք սկսելու համար, մահաւանդ «Էս-տիկա Հէտէրիայի դէմ:

Ս. ՊԵՏԵՐԲՈՐԿԻ ԲՈՐՍՍԱ

Մայիսի 13-ին

Լօնդոնի վրա 10 ֆունտ արծէ. . . 93 ր. 90 Կ.
Ներքին վրա 100 մարկ . . . 45 > 90 >
Պարիզի վրա 100 ֆրանկ . . . 37 > 32 1/2 >
Ոսկի . . . արծէ . . . > >
Մաքսային կուպոններ . . . 149 > >

ԱՏԱՄՆԱՐՈՒԹԱԿԱՆ-ԸՆԴՈՒՆԱՐԱՆ ԵՐԵՒԱՆՈՒՄ

Մ. Մ. ՄԱՐԳԱՐԵԱՆԻ

Հիւանդների ընդունելութիւնը սկսվելու է յունիսի 1-ից: Յանձն է առնում հիւանդ առում-ներ ԲՈՒՅԵԼ, ԼՅՆԵԼ, և ՆՈՐ ԱՏԱՄՆԵՐ ԾՆԵԼ:

ԲԱՂԱԲԱՑԻՆ ՈՒՊՐԱՎԱՆ

Կայտնում է ի գիտութիւն ընդհանուրի, որ 1897—1901 թ. քառամեայ շրջանի հա-մար ձայնաւորների ընտրութիւնը կը կատարվի կերակի օր, ներկայ մայիսի 18-ին, ընտրողական ժողովում, որ տեղի կունենայ Թիֆլիսի ժողովարանի ամառային բնակա-րանում, Միլլայեղեան փողոցի վրա, Թայիլովի այգում: Ժողովի սկիզբը առաւելուան ժամի 8-ին:

BATEAUX A VAPEUR FRANÇAIS N. PAQUET ET C^{ie}

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱՎԱԳԱՅՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Ն. ՊԱԿԵ ԵՒ ԸՆԿ.

Կանոնաւոր և ուղղակի նաւագնացութիւն ՄԱՐՍԵՅԼԻՑ ԲԱԹՈՒՄ, չորեքշաբթի օրերը, երկու շաբա-թը մի անգամ, սկսած յունիսի 25/6-ի չորեքշաբթից:

Եւ հաւանալը՝ Բաթումից Մարսել, մտնելով Տրապիզոն, Սամսուն և Պոլսի Մեկնում է Բաթու-մից՝ չորեքշաբթի, 14/26 մայիսի, ԱՐՄԵՆԻ չորհնաւը, նաւապետ ԲՈՒՂ և այդպէս շարու-նակաբար, երկու շաբաթը մի անգամ, չորեքշաբթի օրերը, ժամի 4-ին ձայն յետոյ: Բա-թումից Պարսկ ուղղակի հաղորդակցութեան տոմսակներ տրվում են սովորականից:

Պա կա ս գ ն եր օ վ: Աղբանքների և ճանապարհորդների մասին հարկաւոր տեղեկութիւններին ստանալու համար թող բարեհաճեն դիմել ընկերութեան գործակալատարներին:

ԲԱԹՈՒՄԻՍԻՍՄ—պ. վերտոր զ'Արմինի, Նաբէթ-ժապալ թիֆլիսիսիս—պ. Օ. Գ. Բարեկենդա-նեանին, Միսի փող. նախկին Արմինու բարկանաւոր: ԲԱԹՈՒՄ—պ. Ս. Դիւրաբանին, Կոլիւրեա-կինակայ հրապարակ: ՆՈՎՈՐՈՍԻՑԿԻ—պ. Մեկնիօր Հերիսիօրերին: (№ 16) 18—20

ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅՈՑ ՀՐԱՏԱՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ գրա-սենեակում և գրաւաճառանցներում վաճառվում են ընկերութեան հետեւեալ հրատա-րակութիւնները:

83 ՀԱՄԼԵՏ ԵՖէսյի թարգ. անգ. Յով. Խան Մառնէանի.	— 75
84 ԲՆԵԱԿԱՆ ՊԱՍՏ. ՀԱՅՈՑ, մասն Ա.	— 1
85 Նոյն, Մասն Բ.	— 1
86 Նոյն, Մասն Գ.	— 1
87 Նոյն, Մասն Դ.	— 1
88 ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ, Բ. տպ. Ս. Պապանանի.	— 1 50
89 ԱԿՆԱՅ ՀՆՈՒԹԻՒՆԲ. Յ. Հանիկեանի.	— 2
90 ՈՒՊԻՐՈՒՅՆԻ ՄԱՆՈՒԿԸ, Ուրի զորացիներից.	— 10
91 ԿՈՇԿԱԿԱՐ ԵՄԱԺԵՏ, Տիւրքերի.	— 5
92 ԽՆՁՈՐԵՆԻՆԵՐԻ ԵՄԱԺԵՏ, Ուրի զորացի.	— 10
93 ԵՄԱԺԵՏ ԵՄԱԺԵՏ, հեղ. տիկին Միսնոյնի.	— 60
94 ՄԵՏԱՊԱՏԻՍ ՄՈՒՐԱՅԻ, Գ. տպ. Յ. Պարանանի.	— 40
95 ՆԱԽԱԳԻՏԵԼԻԲ ԲՈՒՄԱՐԱՆՈՒԹԵԱՆ, Ա. Բիշիկեանի.	— 80
96 ՀԱՅՈՑ ՄԵԼԸ, Ն. Մամիկոնեանի.	— 60
97 ԻՆՁՊԵՍ ԿՈՒՂԵՐ, ԵՖէսյի, թարգ. Յ. Խան Մառնէանի.	— 50
98 ԴՊՐՈՑԱԿԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՆՈՒԹԻՒՆ, Բժ. Վ. Արմինի.	— 50
99 ԿԵՂԵԲԵՏ, մէլ Վ. Ի. Նեմիրովիչ—Գանիկեանի.	— 10
100 ԳՈՐՈՑ ԱՐՄԱԽԵՆԻ.	—
101 ԳՈՐՈՑ ԱԳԻԵՆ.	— 5
102 ՀԱՆԱՊԱՐՀՈՐԴ ԳՈՐՈՑ.	— 5
103 ՄԱՆԿԱԿԱՆ ԼՈՏՈ, պատկերներով.	— 1 25
104 ԳԵՏԱՊՈՐԻ ԵՐԵՄԵՆԵՐԸ, թարգ.	— 10
105 ՎԼԵՏ, Գիւրի գը-Մոսպատին, թ. Լ. Մ. Ա.	— 5
106 ԱԿԱՄԱՅ ՄԱՐԿԱՍՊԱՆ, թարգ. Յ. Յովանիսեանի.	— 15
107 ՄՈՒՐԱՅԻ, Ուրի, թարգ. Յ. Օճանեանի.	— 10
108 ԱՆԵՐԵՆՈՑԻ ՀՈՂԱԳՈՐԾ, Թ. Լ. Մ. Աղաբեանի.	— 7
109 ՆԱՊԱՍԱԿԱ ՍԽԻՐԿԵԼ.	— 7
110 ԾԵՐՈՒՆԻ ՄԱՐԿՈՆ, Ի. Եսկիլի, թ. Մեքսիկեանի.	— 10